

ՊԱՐԱԿԱՆ ԵՐԿՐՈՐԻԱԿԱՆ ՆԱԽԱԿԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒՄՄՈՒՆԸ
ՆԱՅ ՔԵՐԱԿԱՆԱԴԻՏՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Լ. Գ. ԽԱՉԵՐՅԱՆ

Հարաճյուտական հարցերի քննությունն ու մշակումը հայ բերականագիտության պատմության մեջ, ձևաբանության ուսումնասիրության հարաբերությամբ, համեմատաբար ուշ է սկսում: Գիտական հետազոտության ենթարկելով հայ բերականագիտության վաղ շրջանի պատմությունը, սկսած Դիոնիսիոս Թրակացու հայերեն թարգմանությունից (480—484) մինչև XVII դարը զբաղած բերականական և ուղղագրական աշխատությունները, պրոֆ. Վ. Ջահուկյանը հանգել է այն եզրակացության, որ «Հարաճյուտությունը երկար զուրկը հայ բերականության համար մնացել է terra incognita»¹:

Հայերենի հարաճյուտական հարցերի բերականական ուսումնասիրությունն ու մշակումը հիմնականում սկսվում է XIII դարից այն կողմ՝ հանձնելով Կարգան Արևելցու, Կղեմես Գալանոսի, Ոսկան Արևելցու, Զուլալեցու, Հովհաննես Հոլովի և ուրիշների նախադասության և նրա տարբեր տեսակների ճանաչման և պատկարզման, մանավանդ՝ բարդ նախադասության բնույթի մասին առաջին խոսքն ասել են Բալանոսն ու Զուլալեցին՝ հիմնականում էլնելով տրամաբանության պահանջներից և ոչ՝ բերականության Առանձնապես Հովհաննես Հոլովից է սկսում հարաճյուտական հարցերի ուսումնասիրության այնպիսի շրջան, երբ շեշտը գրվում է «խոսքի մասերի» համաձայնության, միմյանց նկատմամբ ունեցած բազմապիսի առնչությունների՝ խնդրառության ու կիրառության կանոնների և օրինաչափության բացահայտման վրա, առանց նախադասության ընդգրկման: Գրաբարի հարաճյուտության հետազոտությունը կատարվում է հետևյալ սկզբունքով, արվում է խոսքի մասերի (և ոչ՝ նախադասության անդամների) միմյանց հետ կապակցելիության կանոնների և օրենքների նկարագրություն:

Մխիթար Սեբաստացին 1730 թվականին հրատարակած իր «Քերականութիւն զրարաոփ լեզուի հայկազան սեփ» աշխատության երրորդ բաժինը նվիրում է գրաբարի հարաճյուտության հարցերին: Ուշագրավ է, որ նա իր այդ գրքի երրորդ հատվածը վերնագրել է՝ «Սկսանի մասն երրորդ յաղագս շարադարութեան մասանց բանին, կիրառութեանց նոցին»²: Սույն հատվածի հենց վերադասությունից էլ երևում է հեղինակի հարաճյուտության բմբռնումը որպես ուսմունք՝ «խոսքի մասերի» «շարադարութեան» և «կիրառութեան» վերաբերյալ:

Գրաբարի հարաճյուտական նյութը բաշխելիս Մ. Սեբաստացին նախ նշում է, որ խոսքի մասերը միմյանց նկատմամբ կապակցելիության չորս եղանակ ունեն, ըստ այսմ էլ՝ համաձայնության չորս տեսակ: «Համաձայնութիւն մասանց բանին են չորս, — գրում է նա — Առաջինն է համաձայնութիւն բայի ընդ անուան... երկրորդ համաձայնութիւնն է սծականի անուան ընդ գոյականի իւրում: ... երրորդ համաձայնութիւնն է յարարեբականի զերանուան ընդ նախընթացի իւրում: ... Չորրորդ համաձայնութիւնն է պատասխանույն ընդ հարցման»³: Այս ընդհանուր դրույթի հիման վրա էլ հենց հեղինակը բացահայտում և նկարագրում է գրաբարի հարաճյուտական կանոններն ու առանձնահատկությունները:

Հայտնի բերական Մ. Չամչյանը հետևյալ կերպ է սահմանում հարաճյուտությունը. «Համաձայնութիւն մասանց բանի են կապակցութիւնք նոցա ընդ միմեանս, առ ի կազմել զբան»⁴:

¹ Վ. Ջահուկյան, Քերականական և ուղղագրական աշխատությունները հին և միջնադարյան Հայաստանում, Երևան, 1954, էջ 29:

² Մ. Սեբաստացի, Քերականութիւն զրարաոփ լեզուի հայկազան սեփ, 1730, Վենետիկ, էջ 369:

³ Նույն տեղում, էջ 369, 370 և 371:

⁴ Մ. Չամչյան, Քերականութիւն հայկազան լեզուի, Վենետիկ, 1779, էջ 277:

ձևերն է, որ հեղինակը «համաձայնություն» բառի տակ լայն առումով հասկանում է շարահյուսությունը: Այս հիմնական ելակետից մեկնելով, Չամչյանը իր թերականության երրորդ մասում քննում է իր կողմից գրաբարում ընդունված 8 խոսքի մասերից յուրաքանչյուրի առնչությունները այլ խոսքի մասերի հետ:

Համարյա նույն սկզբունքից ելնելով գրաբարի վերաբերյալ իր շարահյուսական դիտողություններն է անում Գ. Ավետիքյանը, երբ իր թերականության երկրորդ մասում գրում է. «Տեսաք յառաջին գիրսն զտեղեկություն մասանց բանի՝ իրեն բառից առանձինն նկատելոց, ժամ է այսուհետև զմիաբանություն նույն նկատել ի կազմություն բանի կամ խօսիցան: Մեկնաբանելով հունարեն սինտաքսիս բառը, հեղինակը աներկբայորեն ընդունում է ավանդական հայ թերականության այդ սերմինի բմբուսումը նույնությամբ և Չամչյանի համեմատությամբ նոր խմբավորման ենթարկում շարահյուսության վերաբերող գրաբարի ամբողջ նյութը:

Արսեն Բագրատունին իր մեծարժեք թերականության մեջ նոր մտնեցում է ցուցաբերում շարահյուսության հարցերին: Ուշագրավ է այն հանգամանքը, որ Բագրատունին իր աշխատության երկրորդ մասի «նախաշավիղում» փորձում է շարահյուսական վերլուծությունը սկսել հենց նախադասությունից և քննում նախադասության մեջ յուրաքանչյուր «մասն բանի» պաշտոնը: «Ինչո՞ք քննեցուք, որպէս տոնեմքն ինքնին ի միտս,— գրում է նա,— յորժամ խօսիմք կամ լուեալ ասականամբ պիտոս ինչ, օրինակ իմն գայս:

Կայսրն Հռոմիայեցոց բարեապապարտն Թէոփոս, որ և մեծ, ի քանեւորոյ ամին իւրում Թագաւորեցոյց Հայոց փոխանակ Պապայ Վարդապետ ոմն ի նմին տոհմի արշակունեաց:

Չի՞նչ է գլխաւոր միտքս ասացուածոյս՝ դոր և գիտեմք ի խօսելն կամ ի հասկանալն: Եւ զինչ արար կամ եղև², որից հետո Բագրատունին ցույց է տալիս այդ բարդ ստորադասական նախադասության բաղադրիչ մասերի շարահյուսական հարաբերությունները: Սակայն, ցավոր չորսի, այդ սկզբունքին նա հավատարիմ չի մնում շարահյուսական ամբողջ նյութի շարադրման ընթացքում և ընթանում է իր նախորդների հետքերով:

Մեր դասական լեզվի խոշորագույն գիտակ և ներհուն մտածող Արսեն Այսերյանի վճռական սմանակցությամբ՝ Վ. Չալոխյանի կազմած թերականության մեջ դարձյալ կիրառվում է նախորդ թերականների սկզբունքը՝ առանց Հական փոփոխությունների, խոսքի մասի գաղափարից ելնելով ցույց է տրվում, թե ինչ կանոնների հիման վրա սովյալ խոսքի մասը կապակցվում է մի այլ խոսքի մասի հետ: Հենց այդ խոսքի մասերի միմյանց հետ զուգորդումից հեղինակակիցները հանգում են նախադասության գաղափարին: Այսպես, «Մասանց բովն բով գալ կապվիլը՝ համաձայնություն կրովի.— գրում են վերոհիշյալ հեղինակակիցները:— Այս համաձայնությամբ է՝ որ առանձին բառերն ամբողջ խոսք մը կելլե³:

Այսերյանը իր դարազույս կազմող պատմական թերականության մեջ⁴ շարահյուսական հարցերը նախորդների համեմատությամբ նշանակալի բարձրության է հասցնում: Նա հավասարության գիծ է գնում ինչպես խոսքի, այնպես էլ բառերի համաձայնության միջև: Բնորոշ է, որ նա իր աշխատության երկրորդ մասը վերնագրել է՝ «Խոսք — կամ բառերի համաձայնություն», իսկ խոսք առումով նա հասկանում է նախադասություն. «Խոսք բառը կկոչվի նախադասություն. երբ քանի մը բառ մեկտեղ առած՝ որոշ իմաստ մը կուտան⁵: Ի տարբերություն նախորդ հեղինակների, Այսերյանը իր շարահյուսական սխառնում փոփոխություն է մտցնում շարահյուսական որոշ կատեգորիաների տրագիցիոն անվանման մեջ:

«Այս մասանց-բանի (Ընդհանուր) համաձայնությունը կամ Եւրագրությունն.— գրում է նա,— երեք գլխավոր մաս ունի:

Ա. Սուքն համաձայնություն, այսինքն թե ինչպես երկու բառ իրարու հետ պիտի հարմարին, Կամ (թերականական լեզվով) պիտի համաձայնին:

¹ Գ. Ավետիքյան, Քերականութիւն Հայկական, Վենետիկ, 1813, էջ 321:

² Ա. Բագրատունի, Հայերէն թերականութիւն ի պէտս զարգացելոց, Վենետիկ, 1832, էջ 245:

³ Հ. Վրթանիսի Չալոխյան, Քերականութիւն Հայկազնեան լեզուի, հանգերձ փոփոխմամբ և յաւելուածով տշխասասիրձալ ի Հ. Արսենէ Վ. Այսերյան, Վիեննա, 1885, էջ 207:

⁴ Ա. Այսերյան, Քննական թերականութիւն աշխարհարար կամ արդի հայերէն լեզուի, Վիեննա, 1880:

⁵ Նույն տեղում, էջ 138:

Բ. Խնդրադրություն, այսինքն թե որ բառ ինչ հոլով կուզե, որ քերականության մեջ խնդիր կկոչվի:

Գ. Կիրառություն, այսինքն թե այլևայլ մասունք-բանի ինչ կերպով դորձածելու է, զոր որինակ իրենց նշանակությունը, շարքը, բայի ժամանակները և այլն¹ (վերջին երեք ընդգծումները իմն են — Լ. Խ.):

Ինչպես տեսնում ենք, Այտրյանը շարահյուսական հարցերի ծավալը ընդարձակում է, նրա մեջ ընդգրկելով նաև նախադասության կազմում «մասունք բանի» ձևեր բերած տարրեր կիրառությունները, շարահյուսական հիմնական ձևերից մեկը հանդիսացող բառաշարի խաղաղած մեծ դերը, ինչպես նաև բայի ժամանակներով արտահայտված շարահյուսական հարաբերությունները:

Սակայն հեղինակը, մի կողմից, նախադասության վերաբերյալ ուսմունքը ընդգրկելով շարահյուսության յուրօրի մեջ, ընդգծելով նախադասության տարրեր տիպերի կարեորությունը, մյուս կողմից, այնուամենայնիվ, շարահյուսական բուն նյութի հետադրուման ժամանակ ընթանում է նույն արահետներով՝ խոսքի մասերի կապակցելիության սկզբունքը դնելով շարահյուսական կիրառման հիմքում:

Գրաբարի մեր խոշորագույն քերականները, չնայած նրանց կիրառած շարահյուսական վերլուծության սկզբունքի սահմանափակությանը, որն այդ ժամանակաշրջանում ընդհանուր բնույթ է կրել նաև այլ լեզուների շարահյուսության հետազոտման բնագավառում, այնուամենայնիվ, անգնահատելի ծառայություն են մատուցել գրաբարի շարահյուսության առանձնահատկություններն ու օրինաչափությունները բացահայտելու, նրա մեջ գործող կանոններն ու բացառությունները վեր հանելու և մեկնաբանելու ուղղությամբ: Այդ տեսակետից նրանք ամենայն մանրակրկիտությամբ և խորագնի կերպով ցույց են տվել գրաբարի շարահյուսության ամբողջ բարդ կառուցվածքը, իմաստային այն բազմազան առնչակցությունները, որոնք զրահվում են գրաբարում բառերի համաձայնության, խնդրադրության և կիրառության մեջ: Սակայն այդ բոլորը նրանք գիտել և մեկնաբանել են իրենց ժամանակ տիրապետող շարահյուսական այն սկզբունքի համաձայն, ըստ որի խոսքի մասերի կապակցելիության օրենքների և կանոնների ուսմունքը համարվել է շարահյուսության բուն բովանդակությունը: Իսկ խոսքային և գրավոր հաղորդման քերականական ամենակարևոր միավորը՝ հանդիսացող նախադասության և նրա կառուցման օրենքների, նրա տարրեր տիպերի վերաբերյալ շարահյուսական ուսմունքը նրանք չեն ունեցել: Այդ իսկ պատճառով, այս շրջանի մեր քերականները չեն և մանրամասները, առանց մանրամասներից բարձրանալու ընդհանուրի մակարդակին և այդ ընդհանուրի մեջ գիտելու մանրամասները, որով և ամբողջական կյարձնելին գրաբարի շարահյուսական կառուցվածքի բնույթները: Այլ կերպ ասած՝ այդ ժամանակվա գիտության բոլոր ճշուգներում իրեն երևույթների ուսումնասիրման հիմնական մեթոդ իշխող մետաֆիզիկական մոտեցումը տիրապետող է եղել նաև շարահյուսության բնագավառում: Սակայն այդ հեղինակների վաստակը հիմն հանդիսացավ գրաբարի շարահյուսության ուսումնասիրության հետագա զարգացման համար:

Պատմա-համեմատական լեզվաբանության կարևորուն ներկայացուցիչ Անտուան ԼԲԵՅԻՆ «Փարիզի լեզվաբանական ընկերության մեմուարներ» գիտական հանդեսում անդրադարձել է գրաբարի շարահյուսության հարցերին՝ «Հետազոտություններ հույերենի համեմատական շարահյուսության վերաբերյալ»² վերնագրով իր հոդվածաշարերում: Ա. ԼԵՅԻՆ գրաբարի շարահյուսական կառուցվածքի քննարկումը, սակայն, կատարում է բոլորովին այլ ծրագրով: Նա ևս անտեսելով մտածողության զրահուման և հաղորդման հիմնական քերականական ձև հանդիսացող նախադասությունը և նրա տիպերը, քննում է, առաջին հերթին, առանձին խոսքի մասերի կիրառությունները և նրանցով պայմանավորված շարահյուսական իմաստները, ապա փոփոխվող խոսքի մասերի ձևաբանական ձևերը համեմատության մեջ է դնում հնդեվրոպական լեզուների ձևաբանական նույն իրողությունների հետ, արձանագրում հնչյունական և իմաստային ընդհանրությունները, և եթե այդ երևույթները նորագոյացումներ են հայերենում, նշում է այդ մասին:

Առանձին հետաքրքրություն է ներկայացնում հայտնի տրամաբան, պատմաբան և միաժամանակ լեզվաբան Ա. ԼԲ. Գրաբարյանի 1865 թվականին հրատարակած «Սկզբունք քերականա-

¹ Ա. Այտրյան, նշվ. աշխ., էջ 138:

² A. Meillet, Recherches sur la syntaxe comparee de l'armenien, Extrait des Memoires de la societe de linguistique de Paris, tomes X, XI, XII, XVI, XVII.

³ Տե՛ս A. Meillet, նշվ. աշխ.:

կան և տրամաբանական վերլուծության¹ աշխատությունը, որն ունեցել է մի քանի հրատարակություններ: Հեղինակը իր շարահյուսական տեսության և կիրառման հիմքում դնում է նախադասությունը և նրա տիպերն ու կառուցվածքային տարրերն առանձնահատկությունների հարցերը: ՆՅԼ նախորդ բերականները իրենց շարահյուսական կոնցեպցիաներում ելնում էին սոսկ խոսքի մասերից, խոսքի մասերի փոխադարձ կապի և համաձայնության կանոնների բացահայտման սկզբունքից, եթե նրանք բերականական վերլուծությունը կատարում էին խոսքի մասերից մեկնելով դեպի նախադասություն, ապա Գարագաշյանը իր բերականական վերլուծության հիմքում նախադասությունից զննում է դեպի նրա անդամները: Քեոսը մի բառերն կր բաղկանա,— գրում է նա,— ուստի լուծում բնելը, կամ խոսք մի բերականորեն լուծելը՝ խոսքը իր մասերուն բաժնել ² 2:

Գարագաշյանը իր շարահյուսական սխեմայում հետևելով տրամաբանական ուղղությանը, նախադասության վերլուծման երկու եղանակ է առաջարկում. «Ա. խոսք մի բերականորեն վերլուծել, Բ. խոսք մի տրամաբանորեն վերլուծել»³: Տվյալ դեպքում բերականական վերլուծություն ասելով հեղինակը հասկանում է՝ «խոսք մի կազմող յուրաքանչյուր նախադասություն իր մասերուն լուծել»⁴, իսկ տրամաբանական վերլուծությունը նախադասության մեջ գտնված «բառերուն պաշտոնները ցուցունել» է նշանակում, «այսպես բնելով նախադասությանց կազմությունը՝ ճանշնալ» կարողանում ենք⁵: Սակայն պետք է նկատել, որ հեղինակը նախադասությունը նույնացրել է տրամաբանության գլխավոր ձև հանդիսացող դատողության հետ, նա որոշակիորեն հետևյալ կարծիքն է հայտնում. «Տրամաբանությունը նախադասության մեջ երեք բան միայն կր նկատե. հերակա որ տեր բային է, Սուբյեկտին և կապ որ էական բայն է»⁶, նախադասության որպես բերականական կարևորագույն միավորի վերաբերյալ այս խոցելի տեսակետը լայն տարածում էր գտել XVIII դարում՝ հանձին իդեալիստ բուրժուական փիլիսոփա Բեկկերի, որը նախադասության բերականական կառուցողիան նույնացրել է տրամաբանական կառուցողիայի հետ⁷:

Գարագաշյանը բերականական վերլուծության ժամանակ պահանջում է, որ նախ խոսքի մեջ նախադասությունները անջատվեն և ապա՝ «նախադասության բառերուն նույն նախադասության մեջ կատարած պաշտոնները» ցույց տրվեն⁸:

Հայ բերականական մտքի պատմության բնկացրում շարահյուսական հարցերի մշակման և զարգացման մեջ նախադասության տիպերի և նրանց բերականական-շարահյուսական առանձնահատկությունների, կառուցվածքային տարրերությունների հարցերը զնալով առանցքային հիմնական հարցեր են դառնում և շարահյուսությանը հաղորդում են գիտական առանձին դիսցիպլին դառնալու բնույթը: Այդ իսկ պատճառով նախադասության ընդգրկումը և այն շարահյուսության հիմքում դնելը նոր փուլ են նշանավորում հայերենի շարահյուսական տեսության զարգացման բնագավառում:

Ստորադասական բարդ կապակցության մեջ Գարագաշյանը տարբերում է երկրորդական նախադասությունների երկու տեսակ՝ «մասնավոր միջանկյալ և ընդհանուր միջանկյալ»⁹, ընդ որում Մասնավոր միջանկյալ և ընդհանուր միջանկյալ երկրորդական նախադասությունները բնութագրելիս Գարագաշյանը ցույց է տալիս, թե բերականական ինչ միջոցներով են կապվում դրանք գլխավորի հետ: «մասնավոր միջանկյալ նախադասությունն ան է, որ հարաբերական դերանվաժը կր կապվի ուրիշ նախադասության մի ենթակային կամ ստորոգելվուն հետ, և անոր ածականի պես է. այսինքն՝ ան բառին մեկ ուրիշությունը կամ պարագան կր ցուցունեն»¹⁰:

¹ Ա. Մ. Գարագաշյան, Սկզբունք բերականական և տրամաբանական վերլուծության ի պետս գալոցաց, Գոստանդնուպոլիս, 1868, ր. տպագր:

² Նույն տեղում, էջ 1:

³ Նույն տեղում, էջ 37:

⁴ Նույն տեղում:

⁵ Նույն տեղում, էջ 66:

⁶ Նույն տեղում, էջ 67:

⁷ В. В. Виноградов, Основные вопросы синтаксиса предложения, сб. Вопросы грамматического строя, Москва, 1956, էջ 390:

⁸ Տե՛ս Մ. Գարագաշյան, նշվ. աշխ., էջ 39:

⁹ Նույն տեղում, էջ 72:

¹⁰ Նույն տեղում, էջ 74:

Այնուհետև Գարագաշյանը քննում է բարդ նախադասության բաղադրիչ մասերի փոխհարաբերության և շարադասման հարցերը. «Երկրորդական նախադասությունը կրնա գլխավորեն առաջ ալ գրվիլ, և շատ անգամ այսպես կրլլա՞ն»:

Գարագաշյանը գեղես հստակ կերպով չի տարբերում բարդ նախադասությունների կապակցման երկու հիմնական տիպերի՝ համադասական և ստորադասական բնույթը, դրանց կառուցվածքային որակական տարբերությունները: Այդ է պատճառը, որ հեղինակը մի ընդհանուր հայտարարի է բերել շարահյուսական տարբեր հարաբերություններ արտահայտող բարդ նախադասությունները, ելնելով միայն բարդ նախադասության մեջ (իր տերմինով ասած՝ «պարբերության» մեջ) պարունակվող երկու նախադասությունների առկայության փաստից: Բայց այն հանգամանքը, որ Գարագաշյանը իր ուսումնասիրության շրջանակի մեջ արդեն ընդգրկում է բարդ նախադասությունների վերլուծությունն ու նկարագրությունը, միանգամայն ուշագրավ է: Այդ փաստը ինքնին խոսում է այն մասին, որ հայերենի շարահյուսական հարցերի ծավալը գնալով ընդարձակվում է՝ ընդհուպ հանգելով բարդ նախադասությունների տարբերային ըմբռնմանը:

* * *

XIX դարի երկրորդ կեսում և XX դարի սկզբում իր քերականական երկու աշխատություններով հանդես է գալիս հայտնի գրականագետ, պատմաբան և լեզվաբան Ստեփան Պալասյանը, որը հայերենի շարահյուսական հարցերի մշակման գործում խիստ արժեքավոր ներդրում է կատարել:

Պալասյանը, կանգնած լինելով իր ժամանակի լեզվաբանական գիտության բարձր մակարդակի վրա, գրաբարի շարահյուսական իրողությունները քննում է բոլորովին այլ տեսանկյունից: Նա, ինչպես և Գարագաշյանը, իր շարահյուսական ըմբռնումների հիմքում դնում է նախադասությունը և նրա կառուցման տարբեր տիպերն ու եղանակները, իսկ խոսքի մասերի կիրառությունները քննում է նախադասության մեջ նրանց կատարած ֆունկցիայի տեսանկյունից, որպես նախադասության անդամներ: Պալասյանը հիմնավորում է իր այս տեսանկյունը հետևյալ խիստ բնորոշ պատճառաբանությամբ. «Որովհետև համաձայնության մեջ, — գրում է նա, — մեծ տեղ է բռնում նախադասությունը, այս պատճառով բնական է ամենից առաջ խոսել նախադասության վրա: Այս մասին մեր հին քերականները բոլորովին լուրջ են, չնայած, որ սա էլ այն միակ ուղիղ նախադասությունը, որ արաբերենում էլ մեր լեզվի տառերը մտնելու² (ընդգծումը իմն է — Լ. Խ.):

Պալասյանի կարծիքով երկրորդական նախադասությունները, այդ թվում և պարագայական նախադասությունները, միայն «փոխարինում» են գլխավոր նախադասության որևէ մեկ անդամին, բայց զիմավոր բայով արտահայտված ստորոգյալից: Նա այդպես էլ ասում է. «...Այն նախադասությունները, որոնք ածական անունների ակզ են բռնում, ասվում են ածական կամ որ նույն է հատկացուցիչ նախադասությունները նորա՝ որ գոյական անունների տեղ են բռնում, կոչվում են զոյական կամ խնդիր և ներակա նախադասություններ: Իսկ նորա՝ որ մակբայների տեղ են վարվում, ասվում են պարագայական»:

Նախ՝ պետք է նկատել, որ Պալասյանը գեղես հստակորեն չի սահմանադրում խոսքի մասային կատեգորիաները շարահյուսական կատեգորիաներից և ազատ կերպով օգտագործում է մեկը մյուսի փոխարենը: Երկրորդ՝ ոչ բոլոր երկրորդական նախադասություններն են փոխարինում գլխավոր նախադասության որևէ անդամին (հատկապես պարագայական նախադասություններից՝ հետևների, համեմատության, ժամանակի հարաբերություններ արտահայտող երկրորդական նախադասությունների մի մասը, ինչպես նաև ամբողջ գլխավոր նախադասությանը լրացնող երկրորդական նախադասությունները)³, այլ դրանք վերաբերում են գլխավոր նախա-

¹ Մ. Գարագաշյան, Նշվ. աշխ., էջ 71:

² Ստ. Պալասյան, Գործնական քերականություն հայերեն լեզվի, հատ. II, Համաձայնություն, Խիֆիդ, 1869, էջ Գ:

³ Նույն տեղում, էջ 77:

⁴ Հայ քերականագիտության մեջ այս հարցադրման մասին ավելի մանրամասն տե՛ս Մ. Արեղյան, Աշխարհարարի շարահյուսություն, Վաղարշապատ, 1912, էջ 283: Բանասիրական գիտ. թեկնածու Ն. Վարդ Պասնասյան, Ստորադասական կապակցություններ ժամանակակից հայերենի բարդ նախադասություններում, գիսերտացիա, Խրեվան, 1955, մեթոդական, էջ 26—27, 239—245:

դասության ամբողջ ծավալին, որովհետև այդ տիպի բարդ նախադասության բաղադրիչ մասերը փոխադարձ կապի մեջ են լինում և ոչ թե միակողմանի կախվածություն հանդես բերում: Թվարկված տիպի պարագայական նախադասությունները գլխավորի հետ կապվելու համար շունեն գլխավոր նախադասության մեջ հարարելով բառեր և վերածվելու գեպրում չեն կարող նախադասության անդամ լինել, ուստի և չեն լրացնում գլխավոր նախադասության որևէ անդամի իմաստը: Այդ հանգամանքը բխում է նրանից, որ նշված պարագա երկրորդական նախադասությունները իրենք օժտված են հաղորդման առանձին բովանդակությամբ: Նման կառուցվածքի նախադասությունները ուսաց բերականագիտության մեջ կոչվում են ժերկանդամանի կառուցվածքային բարդ նախադասություններ¹:

Սակայն ստորադասական կապակցությամբ հանդես եկող երկրորդական նախադասությունների, այդ թվում պարագայական նախադասությունների առանձնահատկությունները բացահայտելիս, Պալասանյանը միանգամայն նշում է, որ մեթոդով է առաջնորդվում: Երկրորդական նախադասությունների բնույթը որոշելիս նա ելնում է ոչ թե բերականական արտաբին բազմազան ձևերից, այլ տվյալ շարահյուսական կառուցվածքի հիմքում դրված ընդհանուր իմաստից: Այդ առթիվ նա գրում է. «Սորանից երևում է, որ երկրորդական նախադասության տեսակը, ոչ թե բերականական ձևերից կարելի է իմանալ, այլ՝ մտքից...»:

Պարագայական նախադասությունների դասակարգման ժամանակ Պալասանյանը առանձնացնում է 4 հիմնական տիպեր: Նման խմբավորումը պայմանավորված է արդեն մեր կողմից մատնանշված այն տեսակետով, թե իբր պարագա երկրորդական նախադասությունները միայն լրացնում են գլխավոր նախադասության որևէ անդամին: Երկրորդական պարագայական նախադասությունները, — գրում է նա. — պարագայական բառերի տեղ են բռնում գլխավոր նախադասության մեջ: Բայի գործողության գլխավոր պարագաներն են տեղը, ժամանակը, որպիսով, և պատճառը, այս պատճառով երկրորդական պարագայական նախադասություններն էլ չորս տեսակ են²: Այդ է պատճառը, բայ երկուսն էլ, որ պատճառի պարագա երկրորդական նախադասությունների ընդհանուր հայտարարի տեղ հեղինակը միավորել է նաև «թեական» (իմաստ պայմանական) և «տեղատվական» (իմաստ՝ զիջական) երկրորդական նախադասությունները:

Այնուհետև, «որականական նախադասություն» հասկացության տակ Պալասանյանը բնորոշում է ա) ձևի և բ) համեմատության պարագա երկրորդական նախադասությունները: Սակայն ձևի պարագա երկրորդական նախադասության համար իր բերած օրինակներից երևում է, որ Պալասանյանը դերբայական վարձվածներով արտահայտված ձևի պարագան ևս համարում է երկրորդական նախադասություն. «Ճոխացեալն Տիտոն կործանի» յնքիւր գաւկուցեալ, և փչէ զոգինս: Ոմանք խոյս տուեալ փախչին յահանօրինացն, տաւաշխարհիկ ի ճայրենի գաւառացն լինելով³ 4, Բանն այն է, որ ընդգծված մասերը գուրկ են ստորոգելիական հարարերություն արտահայտություն, այդ պատճառով էլ չեն կարող դրանք դիտել որպես երկրորդական նախադասություններ: Մինչդեռ, դրան հակառակ, գրաբարում կան նաև անորոշ դերբայով, անորոշ դերբայի գործիական հոլովով, ինչպես նաև անցյալ դերբայով ստորոգելիական հարաբերություն արտահայտող երկրորդական այլ նախադասություններ:

1874 թ. հրատարակված «Բերականություն մայրենի լեզվի»⁵ աշխատության մեջ Պալասանյանը իր շարահյուսական դիտողությունները անում է արևելահայ աշխարհաբարի նյութի հիման վրա՝ հիմնականում միևնույն ելակետից մեկնելով:

Գրաբարի շարահյուսության վերաբերյալ իր արժեքավոր աշխատությամբ 1892 թվականին⁶ հանդես է գալիս անվանի հայագետ Ստ. Մալխասյանը: Մալխասյանը լեզվաբանական

¹ Տե՛ս В. Виноградов, Основные вопросы синтаксиса предложения, сопр. Вопросы грамматического строя, Москва, 1955, էջ 433, Н. С. Поспелов, О грамматической природе сложного предложения, сбр. Вопросы синтаксиса русского языка, Москва, 1952, էջ 330—333, Н. С. Поспелов, О различиях в структуре сложно-подчиненного предложения, сбр. Исследование по синтаксису русского литературного языка, Москва, 1956, էջ 50—54:

² Պալասանյան, նշվ. աշխ., էջ 84:

³ Նույն տեղում, էջ 88—89:

⁴ Նույն տեղում, էջ 91:

⁵ Ստ. Պալասանյան, Բերականություն մայրենի լեզվի, Թիֆլիս, 1874:

⁶ Ստ. Մալխասյան, Գրաբարի համաձայնությունը, Թիֆլիս, 1892:

իր խորը իմացությունը քննում է զրարարի նախադասությունների կառուցվածքը. նրանց տիպերն ու որակական տարբերությունները, ինչպես նաև բերականական այն միջոցները, որոնցով կապակցվում են տարբեր բնույթի բարդ նախադասության գլխավոր և երկրորդական մասերը:

Մեծ հայագետը իր շարահյուսական հետազոտությունները կատարելիս, հիմնվել է մեր դասական լեզվի լավագույն ներկայացուցիչների՝ հատկապես Ծղերիկի, Սատվածաշնչի առաջին թարգմանիչների և այլոց աշխատությունների վրա:

Հանձին Մալխասյանի սույն աշխատության հայերենի շարահյուսական հարցերի բնութագրումներն ու մշակումները ստանում են առավել խորություն և լայն թափ: Եվ այդ տեսակետից, իր ժամանակի դիտական պահանջների համեմատ, նրա շարահյուսական հայացքները միանգամայն արդարացիում են: Սակայն նրա ժառանգությունն վերհամեմատ առնչությամբ, մասնավորապես մեր շոշափած հարցի առթիվ, հարկավոր է նաև ցույց տալ այն, ինչ նրա մոտ բաց է մնացել:

Խոսելով պարագայական երկրորդական նախադասությունների մասին, Մալխասյանը նշում է հինգ տիպի պարագա նախադասություններ. ա) տեղի, բ) ժամանակի, գ) եղանակի, դ) պատճառի և նպատակի: Պարագայական երկրորդական նախադասությունները, — գրում է նա, — բացատրում են գլխավոր նախադասության ասացվածքի պարագաները: Սորա հինգ տեսակ են լինում — տեղի, ժամանակի, եղանակի, պատճառի և նպատակի պարագաներ, և սորա համաձայն պարագայական նախադասություններն ևս լինում են հինգ տեսակ — տեղական, ժամանակական, եղանակական, պատճառական և նպատակական երկրորդական նախադասություններ¹: Ինչպես պարզվում է, Մալխասյանը լռելյայն ելնում է այն նույն սկզբունքից, ինչ Պատանյանը, այսինքն ըստ նրա պարագա երկրորդական նախադասությունները միայն «փոխարինում» են գլխավոր նախադասության ստորոգյալի պարագայական անդամներին, և այդ պատճառով պարզ նախադասության ստորոգյալի թվարկած հինգ պարագաների համապատասխան էլ նշում է միայն հինգ տիպի պարագա երկրորդական նախադասություններ: Այս մոտեցումը, իհարկե, միակողմանի է, ուստի և չի կարող արտացոլել պարագայական երկրորդական նախադասությունների այն բազմազանությունը, որով հարուստ է զրարարը: Հետևաբար պատահական չէ, որ «եղանակական պարագայական նախադասության» տակ Մալխասյանը միավորել է կառուցվածքային, ինչպես նաև շարահյուսական այլ կարգի հարաբերություններ արտահայտող կառուցողականներ՝ ա) ձևի, բ) համեմատության և գ) շափի պարագայական նախադասությունները: «Եղանակական պարագայական նախադասությունը, — գրում է նա, — բացատրում է, թե ինչ կլեզվով, ինչ բանի նման, ինչ շափով է կատարվում գլխավոր նախադասությունը, և այս պարագաներն արտահայտում է Երեք տեսակ. նկատագրությամբ, համեմատությամբ և բացատրությամբ², նկատագրական (ձևի) պարագայական նախադասություն է համարում այնպիսի նախադասություններ, որոնց մեջ առկա չէ ստորոգյալիական հարաբերություն, «ի ծուներ իջևալ առաջի նուրի՛ կատակէին»³: «Սեղ հարկ եղև ի սիրոյ բարեկամաց, ապա ինկալ յնկտուծոյ շնորհսն՝ մխել ի խնդիր ճառից»: «Զթաղեալ մարմինս. ընդ հողով՝ մեկնացևալ խայտառակալ, արևու ցուցանեն»⁴: Ընդգծված մասերը աշխարհարար հենց այդպես էլ թարգմանվում են՝ որպես անորոշ դերբայի գործիականով և կամ հարակատար գերբայով արտահայտված դերբայական դարձվածներ:

Այնուհետև քննելով իր կողմից դասակարգման ենթարկված պարագայական երկրորդական նախադասությունների երրորդ խմբի երրորդ ենթատեսակը, Մալխասյանը գրում է. «Բացատրական պարագայական նախադասությունը բացատրում է գլխավոր նախադասության որևէ մասի ուժը, չափը կամ աստիճանը⁵: Նրա բերած նմուշներն են՝ «Այնպէս սիրեաց Սատուած զաշխարհ մինչև զորդին իւր ետ»: Նորա այսչափ ժմերտեալը (են)՝ մինչև զամենայն մարդկան աշխարհումն: Այս բարդ նախադասությունների մեջ ընդգծված առաջին երկրորդական նախադասությունը ձևի պարագա է՝ հետևանքի պարագայի շեշտված իմաստային երանգով և ըստ էության ոչնչով չի տարբերվում նկարագրական (իմաս՝ ձևի) պարագայական նախադասություններից. իսկ երկրորդը՝ արդեն բացահայտորեն չափի պարագա է:

Մալխասյանը պարագա երկրորդական նախադասությունների շարահյուսական կառուցողական բնույթն պատկանող պատճառական, պիտանական և պայմանական նախադասությունները գտնել է

¹ Ս. Մ. Մալխասյան, նշվ. աշխ., էջ 130.

² Նույն տեղում, էջ 131:

³ Նույն տեղում, էջ 131—132:

Համադասական նախագահությունների շարքը: Նրան շփոթեցրել է այն հանգամանքը, որ այդ ստորագրական բարդ նախագահությունների կառուցվածքում մասերի հարաբերությունը միմյանց նկատմամբ, սկզբնական տեսակետից, մոտենում է համադասականին: Մինչդեռ նրանք իրենց բերականական միջոցների դրսևորմամբ և ֆունկցիայով պարագայական նախագահություններ են և ոչ թե համադասական: Քաղաքական համադրության մի տեսակն էլ,— գրում է նա,— կոչվում է պատճառաբանական համադրություն, որի մեջ հավասարազոր նախագահությունները միմյանց վերաբերում են՝ ինչպես պատճառը հետևանքին, կամ ինչպես հետևանքը պատճառին...»² Բերված օրինակներն են՝ «Քանդի բարերար էություն է Աստուած՝ ոչ կամեցալ զաղնուականությունն իւր ծածկելո: «Ուրվհետև կերար ի ծառոյ անտի, յորմէ պատուիրեցի քեզ չուռել՝ անիծեալ լիցի երկիր ի դործս քո» և այլն: Իսկ զիջական պարագայական նախագահությունները Մալխասյանը համարել է «ներհակական համադրություն», հավասարեցնելով դրանք իսկ, բայց, ոչ միայն... այլև շաղկապներով կապակցվող բարդ համադասական նախագահություններին՝ իրեն նրանց մի տարրերակը, ելնելով սոսկ հակադրության իմաստ արտահայտելու հանգամանքից. բերականական ձևավորումը (ևրկրորդական նախագահությունների կապակցումը գլխավորի հետ քնակետ, քնակետ և, քնակետ և այլ ստորագրական շաղկապներով) տվյալ դեպքում անտեսվում է:

«Ներհակական համադրությամբ կապվում են միմյանց հետ այնպիսի նախագահություններ,— գրում է նա,— որոնք որևիցե բանով անհամաձայն են միմյանց, կամ նույնիսկ հակառակ են: Ներհակական համադրությունը երեք տեսակ է լինում. ա) Հակասական, բ) Փխտական, և) Զիջողական»:

Պատճառական նախագահությունների մեջ Մալխասյանը տարբերում է հետևյալ տիպերը. ա) Երկրորդական պատճառ, որի զորությամբ մի բան կատարվում է, բ) շարժառիթ պատճառ, որի առիթով մի բան կատարվում է, և գ) վախճանական պատճառ, որի համար մի բան կատարվում է»³:

Մալխասյանը պատճառական նախագահությունների մի տարբերակն է համարում նաև պայմանական նախագահությունները: Մալխասյանի այս տեսակետը ևս ընդունելի չէ, որովհետև ինչպես նպատակի, այնպես էլ պայմանի երկրորդական նախագահությունները շարահյուսական բովորովին այլ հարաբերություն հենում, քան պատճառի պարագայական նախագահությունը, չնայած վերջինիս հետ նրանց ունեցած իմաստային առնչությանը:

1911 թվականին լույս է տեսնում Հարություն Թումանյանի «Հայոց աշխարհաբար լեզվի համադասական համաձայնություն» աշխատությունը, որտեղ նա ևս քննում է պարագա երկրորդական նախագահությունների տարբեր տիպերը և կատարում իր դասակարգումը: Խոսելով բարդ նախագահությունների հիմնական ձևերի մասին, նա գրում է. «Նախագահությունները կապակցվում են միմյանց հետ երկու եղանակով՝ 1) ստորագրական և 2) շարադրական»⁴: Ընդ որում տալով դրանցից յուրաքանչյուրի սահմանումը, նա ասում է. «Ստորագրական եղանակով կապակցվում են միմյանց հետ գլխավոր և երկրորդական նախագահությունները», իսկ «Շարադրական (իմա՝ համադասական — ի. Խ.) եղանակով կապակցվում են միմյանց հետ ինքնուրույն նախագահությունները, որոնք քերականորեն իրարից կախում չունեն և որոնցից յուրաքանչյուրը մի առանձին միտք է պարունակում իր մեջ: Այդ անկախ նախագահություններն ունեն միայն ներքին տրամաբանական կապ»⁵:

Եթե ստորագրությունը, ընդհանուր առմամբ, հեղինակի կողմից ըմբռնվել է մոտավորապես ճիշտ, ապա համադասական կապակցությունը (իր տերմինով ասած՝ «շարադրական») զրկվել է իր բերականական բովանդակությունից, որովհետև նրա բաղկացուցիչ մասերը համարվել են «անկախ» և «բերականորեն իրարից կախում չունեցող» ինքնուրույն նախագահություն:

¹ Տե՛ս Մալխասյանի, նշվ. աշխ., էջ 149, 151 և 157:

² Տե՛ս նույն տեղում, էջ 147—148, նաև 152:

³ Նույն տեղում, էջ 150:

⁴ Նույն տեղում, էջ 149:

⁵ Հարություն Թումանյան, Հայոց աշխարհաբար լեզվի համադասական համաձայնություն, Թիֆլիս, 1911:

⁶ Նույն տեղում, էջ 36:

⁷ Նույն տեղում:

⁸ Նույն տեղում, էջ 54:

ներ, որոնք միմյանց հետ թունեն միայն ներքին տրամաբանական կապ: Այստեղ հեղինակը շփոթել է երկու բան՝ արցի տրամաբանական և քերականական կողմերը: Ելնելով միայն տրամաբանական կատեգորիայի տեսանկյունից՝ լեզվի մեջ խոսքի բոլոր միավորները տրամաբանական բազմապիսի կապերի ու վոխհարարությունների մեջ են գտնվում, հանդես բերելով կախվածության ու պայմանավորվածության բազմաթիվ ու բազմազան առնչություններ: Եթե հարցին այդպես մոտենանք, ապա նույնիսկ քերականորեն ավարտված, ինքնուրույն նախադասության մասին խոսք լինել չի կարող: Իրականում, ոչ մի նախադասություն, ինչ բնույթի էլ լինի, կոնտեքստի մեջ տրամաբանական ներքին կապից դուրս չի կարող լինել: Սակայն տրամաբանական ձևերին կապն էլ, համապատասխան իր բնույթին, դրսևորվում է քերականական տարրեր կատեգորիաների միջոցով, որոնք շարահյուսության մեջ կոչվում են համադասություն և ստորադասություն:

Հարություն Թումանյանը պարագայական նախադասությունների իր դասակարգման մեջ հետևյալ խմբավորումն է կատարել. ա) տեղական, բ) ժամանակական, գ) որական (արդի շարահյուսական տերմինով՝ ձևի), դ) բունական (իմաստ՝ շափի), և վերջին կետում միացրել է ե) պատճառի և նպատակի պարագայական նախադասությունները:

Այս հեղինակը ևս, Մալխասյանի նման, ուղղահայտ, այդ պատճառով, ուստի, ուրեմն և այլ շաղկապներով գլխավորի հետ միացող պատճառի ու հետևանքի կապակցություն արտահայտող նախադասությունները, ինչպես նաև պայմանական և պիջական (նրա տերմինով՝ «տեղատվական») նախադասությունները շփոթել է համադասական նախադասությունների հետ:

Աշխարհաբարի շարահյուսական ամբողջ կառուցվածքի խորը, մանրազնին և բազմակողմանի ուսումնասիրությամբ 1912 թվականին հանդես է գալիս բազմազան գրականագետ, բանասեր և միաժամանակ լեզվաբան Մանուկ Աբեղյանը, որը հայ գրականությանը, բանահյուսությանն ու լեզվաբանությանը մասուցած իր ծառայություններով նշանակալի տեղ է գրավում հայագիտության մեջ:

Մ. Աբեղյանը իր շարահյուսական սխեմայում բարդ նախադասությունների կապակցման գլխավոր ձևերի վերաբերյալ առաջին անգամ օգտագործում է «ստորադասություն» և «համադասություն» շարահյուսական տերմինները, որոնք հետագայում քաղաքացիական իրավունք են ձևոր բերում:

Կարևոր է նշել, որ Աբեղյանը երկրորդական նախադասությունների գլխավորի նկատմամբ ունեցած հարաբերությունը դիտում է երկակի կապով. ա) երբ երկրորդական նախադասությունը հարաբերում է գլխավոր նախադասության որևէ անդամի ծավալին (բացի դիմավոր բայով արտահայտված ստորոգյալից), բ) երբ երկրորդական նախադասությունը հարաբերում է գլխավոր նախադասության ամբողջ ծավալին: Աբեղյանի բերած այս նորույթը խիստ արժեքավոր նվաճում է հենց երկրորդական նախադասությունների՝ այդ թվում և պարագայական նախադասությունների բնույթն ու պաշտոնը ճիշտ հասկանալու համար:

Աբեղյանը ստորադասական հարաբերություն արտահայտող պարագայական նախադասությունների հետևյալ դասակարգումն է տալիս. ա) տեղի, բ) ժամանակի, գ) ձևի, բաղդատություն, լրացնել, շափի ու աստիճանի և հետևաբար, դ) պատճառի, ե) նպատակի, զ) պայմանական և է) զիջական²:

Ինչպես նկատում ենք, Աբեղյանը, նախորդ հեղինակների համեմատությամբ, ավելի մեծ քանակությամբ և բազմապիսի պարագայական երկրորդական նախադասություններ է ընդգրկել իր շարահյուսական սխեմայում, իսկ դրանց խմբավորման տեսակետից ճիշտ մոտեցում է ցուցաբերել՝ պատճառի, պայմանի և զիջական նախադասությունները դիտելով որպես ստորադասական կապակցությամբ հանդես եկող պարագայական նախադասություններ և ոչ թե, նախորդ հեղինակների նման, համադասական բնույթի նախադասություններ:

Սակայն պետք է նշել, որ Աբեղյանը գ) կետում թվարկած «ձևի, բաղդատություն, շափի ու աստիճանի և հետևաբար» պարագայական նախադասությունները դեռևս մի ընդհանրության տակ է վերցնում, մինչդեռ դրանք և՛ իմաստի տեսակետից, և՛ քերականական ձևավորման առումով ուրույն պարագայական նախադասություններ են, ուստի և հարկ է դրանք դիտել որպես առանձին տիպի նախադասություններ:

Տե՛ս Մ. Ա. և զ. յ. ա. Ն. Աշխարհաբարի շարահյուսություն, Վաղարշապատ, 1912, էջ 271:

² Նույն տեղում:

խոսելով «ձեռի և չափ ու բանակի» պարագայական նախադասությունների մասին, նա հետևյալ տիպերն է առանձնացնում՝ ա) բաղդատական, բ) հետևանքի և գ) բացարարծություն, ընդ որում նա բաղդատականը, իր հերթին, բաժանում է ա) նմանության («Արա՛ ինչպես կուզես»), բ) կարծեցյալ («նա այնպես է ման դալիս, որպես թև կաղ լինի»), գ) հավասարության («Արծաթը նույնքան օգտակար է, որչափ ոսկին»), դ) հաւարեւական («Շանը բանի զարհեշ, կհաշի») և ե) տարբերության («Պարապությունը ավելի է վնասում առողջությանը, քան չափականը գրադմունքը») ենթատեսակների:

Բնութագրելով հետևանքի երկրորդական նախադասությունները, Աբեղյանը հետևյալ սահմանումն է տալիս. «Հետևանքի խոսքերը որոշում են խոսքի ձևը կամ աստիճանը, ցույց տալով նրա հետևանքը կամ ազդեցությունը»²։ Այս բնորոշումից ականջատ է դառնում, որ Աբեղյանը հետևանքի երկրորդական նախադասությունը նույնացրել է ձեռի և չափի (աստիճանի) պարագա ցույց տվող երկրորդական նախադասությունների հետ, ելնելով այն բանից, որ վերջիններս, իրենց հիմնական շարահյուսական ֆունկցիան կատարելով հանդերձ, երկրորդաբար հետևանքային իմաստ են արտահայտում։ Իր այդ տեսակետը հիմնավորելու համար նա բերում է հետևյալ բնորոշ օրինակները. «նա այնպես մոխն է խոսում, որ ես բան չեմ հասկանում»։ «Նրա կոպիտ վարմունքն ինձ այնպես վիրավորեց, որ ես թողի, հեռացա նրանից»։ «Տան պատերը ծխից սեւացած էին այն աստիճան, որ շատ տեղ փայլում էին լույսի առաջ»։ «Խոսում է, խոսում, այնքան, որ գլուխ է տանում»։ Չնայած այն բանին, որ վերոբերյալ չորս բարդ նախադասությունների մեջ երկրորդական նախադասությունները արտահայտում են հետևանքի իմաստային երանդ, սակայն իրենց հիմնական շարահյուսական ֆունկցիայով և բերականական ձևավորմամբ բոլորովին այլ հարաբերություն են նշում. առաջին երկուսը ձեռի պարագա արտահայտող նախադասություններ են (որոնք գլխավորի մեջ ունեն «այնպես» հարաբերյալը, որն ինքնին ականարկում է ձեռի պարագա լինելը), իսկ վերջին երկուսը չափի պարագա արտահայտող երկրորդական նախադասություններ են (գլխավոր նախադասության մեջ ունեն «այն աստիճան» և «այնքան» հարաբերյալները, որոնք արդեն նշում են պարագա չափի պարագա երկրորդական նախադասություն լինելը)։

Բանն այն է, որ հետևանքի երկրորդական նախադասությունը վերաբերում է ոչ թե գլխավոր նախադասության որևէ մեկ անդամին, այլ գլխավոր նախադասության ամբողջ ծավալին, սովորած է հաղորդման առանձին բովանդակությամբ և այդ պատճառով էլ նման տիպի կառուցվածք ունեցող նախադասությունները չեն կարող լրացնում և վերածվել պարզ նախադասության անդամի շեմի:

«Եւ էր հանդերձն անհեղեղ մեծութեամբ. զի խորշ գլխորշիւ իջանէր, մինչ զի ոչ կարէր հանդերձել զանձն իւր, զի պատեաց զնա մեծութիւն հանդերձոյն» (Բիւղ. ՊԶ, 305—6)։

Վստն գի. զի գրաբարյան ստորագաստական շաղկապներով կապակցվող երկրորդական նախադասությունները Աբեղյանը համադասական է համարում, հակասելով աշխարհարարի նույն տիպի շարահյուսական պաշտոն կատարող երկրորդական նախադասությունների նկատմամբ կիրառած իր սկզբունքին։ Մինչդեռ գրաբարյան այդ շաղկապները երկրորդական նախադասություններին հաղորդում են պատճառի, հիմունքի իմաստ և բացատրում են գլխավոր նախադասության գործողության հանգամանքները։

Աւստի. ուստի և, ուրեմն, աւստ ուրեմն և այլն շաղկապներով հանդես եկող երկրորդական նախադասությունները Աբեղյանը դիտում է որպես համադասական բնույթի նախադասություններ։ Դժվար է համաձայնել այս տեսակետին, որովհետև նշված շաղկապները երկրորդական նախադասություններին հետևության, եզրակացության իմաստ հաղորդելով, գլխավորի նկատմամբ անհավասարազոր հարաբերություն են արտահայտում։ Աբեղյանի բերած օրինակներն են՝ «Տոբից, ըստ երևույթին, նա շատ էր նեղում, ուստի և հաճախ գանգատվում էր»։ «Ես հանցանք չեմ գործում, ուրեմն վախենալու էլ ոչինչ չունիմ»։ Աբեղյանը նմանապես ուրով և շաղկապական կապակցությունը համարում է համադասական. «Է՛հ հագն վիշապների հետ է կռվում և հաղթում նրանց, ուրով և վիշապաբաղ ասվելու արժանի եղավ»³։ Այստեղ երկրորդական նախադասությունը հետևանքի իմաստ տնի և հարաբերում է գլխավոր նախադասության ամբողջ ծավալին։

¹ Աբեղյան. նշվ. աշխ., էջ 310:

² Տե՛ս նույն տեղում, էջ 314:

³ Տե՛ս նույն տեղում, էջ 339:

Բացարձակությամբ պարագայական նախադասություններն Արեղյանը համարում է այնպիսի, որոնք գլխավորի հետ կապվում են առանց որ շաղկապով, նշանակելով հարակից հետեան, կամ հանգամանք չլինելը. (առհասարակն է անպատիժ կերպով խախտել այդ ներդաշնակությունը, ասհասարակն է աղավաղել, խեղաթյուրել բնությունը, առանց որ այդ հանցավոր փորձի հակահարվածը նույն փորձի հեղինակի գլխին ընկնեք)¹:

Ինչպես տեսնում ենք, Արեղյանի շարահյուսական հարցերի ընդգրկման տարողությունը բավական մեծ է: Նա պարագայական նախադասությունների, ինչպես և առհասարակ ստորագասական բարդ նախադասությունների կառուցվածքը քննելիս և շարահյուսական հարաբերությունները բացահայտելիս կիրառում է միանգամայն գիտական մեթոդ. նախ՝ ստորագասական կապակցությամբ հանդես եկող պարագայական նախադասությունների շաղկապավոր տիպերում (իր տերմինով՝ «զոդվածով») առանձնացնում է այն շաղկապներն ու հարաբերական բառերը, որոնցով պարագայական նախադասությունները կապվում են գլխավորի հետ, ապա ցույց է տալիս, թե քերականական այդ միջոցներով իմաստային ինչպիսի փոխհարաբերություններ են արտահայտվում, այդ ձևով նրան հաջողվում է ցույց տալ մտածողության բարդ ձևերի լեզվական դրսևորման այն հարստությունը, որ արտահայտվում է աշխարհագրարում ստորագասական կապակցությունների շնորհիվ: Չնայած այն հանգամանքին, որ Արեղյանի քերականագիտական հայացքների հիմքում ընկած է խոսքի մասերի և շարահյուսական կատեգորիաների շփոթումն ու անհետևողականությունը, այնուամենայնիվ, շարահյուսական բուն նյութի խորագնին մշակումն ու հեղինակի կիրառած գիտական մեթոդը ապահովում են շարահյուսական հարցերի ճիշտ մեկնաբանումը:

Սովետական շրջանում հայերենի շարահյուսությունը վերաբերյալ կայուն դասագրքերի շարքն է մտել պրոֆ. Գ. Սևակի «Հայոց լեզվի շարահյուսություն» աշխատությունը, որը մինչև այժմ ունեցել է իր 16-րդ հրատարակությունը: Հեղինակը իր աշխատության մեջ առաջինն է, որ հարահյուսական կատեգորիաները խստիվ սահմանագատել է խոսքի մասերի կատեգորիաներից և իր սահմանումների մեջ հիմք է ընդունել միայն նրանց շարահյուսական իմաստը: Պրոֆ. Սևակը հայ քերականագիտության մեջ նշանակալի ներդրում է կատարել. նա մինչև այդ տիրող շարահյուսական բմրոնումների մեջ հստակություն ու պարզություն մտցրեց՝ տալով յուրաքանչյուր շարահյուսական կատեգորիայի գիտական սահմանումը, օժտելով վերջինս գիտական տերմինոլոգիայով. որն այժմ արդեն կազմում է սովետահայ լեզվաբանության սեփականությունը:

Սակայն պետք է նշել, որ պրոֆ. Սևակը հիշյալ ձևերակում ավելի հանգամանորեն կանգ է առել պարզ նախադասության և նրա անդամների շարահյուսական առանձնատկությունների մեկնաբանման վրա, քան բարդ նախադասությունների գլխավոր երկու ձևերի՝ համադասության և ստորագասության կառուցվածքային-քերականական տիպերի և նրանց իմաստային փոխհարաբերությունների, ինչպես նաև այլ բնույթի հարցերի վրա: Ինչ վերաբերում է պարագայական նախադասություններին, ապա հեղինակը սահմանափակվել է միայն մի քանի նախադասությունների նմուշ բերելով⁴: Ըստ երևույթին, նֆատի ունենալով իր ձևերակի բնույթը, հեղինակը ավելի շուտ ծանրացել է ստորագասական նախադասությունների «կրճատման», քան թե ըստ ամենայնի դրանց առանձնատկությունների քննության վրա:

Դուցենք Ա. Գրիգորյանը «Հայոց լեզու» դասագրքում ստորագասական կապակցությամբ հանդես եկող երկրորդական նախադասությունների, այդ թվում և պարագայական նախադասությունների բնույթը որոշելիս, ելնում է երկրորդական նախադասության՝ գլխավորի նկատմամբ ունեցած միայն մեկ հարաբերությունից, այն է՝ թե նրա որ անդամին է փոխարինում, իսկ այն մասին, որ երկրորդական նախադասությունները հարաբերում են նաև գլխավոր նախադասության ամբողջ ծավալին, հեղինակը ոչինչ չի ակնաբերում:

¹ Արեղյան, նշվ. աշխ., էջ 315:

² Պրոֆ. Գ. Սևակ, Հայոց լեզվի շարահյուսություն, Երևան, 1958:

³ Տես նաև նույնի «Խոսքի մասերի ուսմունքը», Պետ. համալսարանի Գիտական աշխատությունների ժողովածու, հ. 9, 1939, էջ 189—214, և «Շարահյուսության մի քանի հարցեր մարքս-լենինյան իմացարանության լույսի տակ» (առանձնատիպ, Ն. Յա. Սատի անվան Լեզվի ինստիտուտի 1949 թ. «Լճխատությունների ժողովածուի» հ. 4-րդից) աշխատությունները, որոնցում արծարծվում են շարահյուսության ընդհանուր տեսությունը և վերաբերող կարևոր խնդիրներ:

⁴ Տես Գ. Սևակ, Հայոց լեզվի շարահյուսություն, Երևան, 1955, էջ 124—125:

Այնուհետև պարագա երկրորդական նախադասությունների խմբավորումը հեղինակը կատարում է հետևյալ կերպ. ա) տեղի, բ) ժամանակի, գ) ձևի, դ) նպատակի, ե) պատճառի, զ) շափի ու փանակի, է) հիմունքի, ը) զիջման կամ հակառակ հիմունքի, թ) միասնությամբ եղանակի և ժ) պայմանի պարագաները: Տուրաբանչյուր պարագայական նախադասության հակիրճ նկարագրությունը տալուց հետո, հեղինակը նրանց օժտում է մի քանի օրինակներով և սահմանափակվում:

Մենք այստեղ կանգ չենք առնում այն աշխատությունների վրա, որոնք թեև իրենց բնույթով և այլ առնչությամբ մեծ արժեք են ներկայացնում, բայց անմիջականորեն չեն շփվում մեր արժարժած թեմայի հետ:

* * *

Ամփոփելով վերը ասածները, հանգում ենք հետևյալ եզրակացություններին:

1. Հայերենի շարահյուսական հարցերի քերականական ուսումնասիրությունը հիմնականում սկսվում է XIII դարից այս կողմ՝ հանձինս Վարդան Արևելցու, Կղեմես Գալանոսի, Ոսկան Արևելցու, Զուղայեցու, Հովսի, Մ. Սեբաստացու, Չամչյանի և ուրիշների: Նախադասության և նրա տեսակների ճանաչման և դասակարգման, բարդ նախադասության բնութի մասին առաջին արտահայտությունները գտնում ենք Գալանոսի և Զուղայեցու մոտ: Հատկապես Հովհաննես Հովովից սկսվում է շարահյուսական հարցերի ուսումնասիրության այնպիսի շրջան, երբ գրաբարի քերականները (Մ. Սեբաստացի, Չամչյան, Ավետիքյան, Այտրեյան, Չալոյան և այլն) իրենց հետագոյությունը կատարում են՝ նկարագրելով խոսքի մասերի (և ոչ նախադասության անդամների) միմյանց հետ ունեցած կապակցելիության կանոններն ու օրենքները:

2. Գարագաշյանով և առանձնապես Պալասանյանով սկսվում է շարահյուսական հարցերի մշակման և վերլուծության նոր շրջան, երբ նախադասությունը դրվում է շարահյուսության հիմքում և նախադասությունից մեկնելով է որոշվում նախադասության անդամների կատարած պաշտոնը և ոչ թե նախադասությունից անկախ Գարագաշյանը ցույց է տալիս նախադասությունների տիպերն ու քերականական միջոցները, թեև ոչ հստակ և որոշակի պատկերացմամբ՝ երբեմն նույնիսկ երկրորդական նախադասությունների առանձին տիպերը, ֆունկցիայի և շարահյուսական հարաբերության տեսակետից: Չլրջում է քերականական-կառուցվածքային բոլորովին այլ տիպի նախադասությունների հետ:

Պալասանյանը և հետագայում հանդես եկող հեղինակները առավել խորացնում և զարգացնում են բարդ նախադասությունների վերաբերյալ ուսմունքը: Ցույց են տրվում բարդ նախադասության երկու գլխավոր ձևերի՝ համադասականի և ստորադասականի տարբերությունները, նրանց դրսևորման քերականական միջոցները, նրանց տիպերի խմբավորումներ են կատարվում. և հանձին Պալասանյանի հայ քերականագիտության մեջ հիմք է դրվում պարագայական երկրորդական նախադասությունների վերաբերյալ շարահյուսական կատեգորիայի ուսումնասիրման:

3. Գրաբարի պարագայական նախադասությունների մասին իրենց շարահյուսական սիստեմում՝ բնահանուր և համառոտակի կերպով խոսել են հայ քերականագետներից միայն Պալասանյանն ու Մալխասյանը: Բայց նրանք ամենևին չեն տեղադրվել այն հարցին, թե գրաբար քերականական ինչպիսի՝ բաղադրանքներից և օգտագործել պարագայական նախադասությունների իր հարուստ համակարգը արտահայտելու համար, և ըստ ամենայնի ցույց չեն տվել, թե պարագայական նախադասությունները իմաստային ինչպիսի՝ նրբերանգներ և անցումներ են դրսևորել իրենց կիրառման լայն շրջանակում: Բացի դրանից, որ ամենից կարևորն է, նշված հեղինակներին չի զբաղեցրել այն հարցը, թե կառուցվածքային-շարահյուսական տեսակետից, միայն գրաբարին բնորոշ, պարագայական ինչպիսի՝ նախադասություններ են հանդես գալիս:

¹ Ա. Գրիգորյան, Հայոց լեզու, Երևան, 1954, էջ 220:

Տե՛ս Ա. Արբախյան, Գրաբարի ձևաբանություն, Երևան, 1958, 2-րդ հրատ., նույնի՝ Հայերենի դերբայները և նրանց ձևաբանական նշանակությունը, Երևան, 1953, Ա. Ղադարյան, Գրաբարի դասագիրք, Երևան, 1951, Վ. Առաքելյան, Գրաբարի հոլովների իմաստային նշանակությունները, դիսերտացիա, մեքենագիր, Երևան, 1944, նույնի՝ Ժամանակակից հայերենի հոլովների և հոլովական կապակցությունների իմաստային առումները, Երևան, 1957, նույնի՝ Հայերենի շարահյուսություն, հ. Ա, Երևան, 1956 (պարզ նախադասություն մասին):

Հայերենի զարգացման տվյալ փուլում Պալատոսյանն ու Մալխասյանը բաժանարարվել են պարսկական նախադասությունների բոսկ մի բանի տիպեր նշելով, և այն էլ՝ իմիջիպես, որովհետև նրանց նպատակից դուրս է ելել զբարարի միայն պարսկական նախադասությունների ամբողջ համակարգի հատուկ ուսումնասիրությունը:

4. Մ. Արեղյանը, աշխարհարարի հարուստ նյութի վրա, լայն ընդգրկումով ու համակողմանիորեն բնութագրելով մեր լեզվի շարահյուսությունը, նա իր հետազոտման ոլորտի մեջ է առել բարդ նախադասությունների գաղափարգույժը, նրանց բնույթն ու քերականական-կառուցվածքային առանձնահատկությունները: Արեղյանը ավել է աշխարհարարում հանդես եկող պարսկական նախադասությունների գաղափարգույժը և նրանց իմաստային փոխհարաբերությունները: Սակայն պետք է նշել, որ նա ևս խորամուխ չի ելել, թե պարսկական նախադասությունները ինչպիսի ֆունկցիոնալ, իմաստային անցումներ են կատարում ինչպես միմյանց, այնպես էլ երկրորդական մյուս նախադասությունների հետ, վերջիններին հետ ունեցած սերտ ազդեցությունը շնորհիվ:

5. Պարսկական նախադասությունների, և առհասարակ բարդ նախադասությունների շարահյուսական-կառուցվածքային առանձնահատկությունները բնութագրելիս մեր բոլոր հեղինակներն էլ բնեկ են միայն շարկապով ու հարարերական բառերով կապակցվող երկրորդական նախադասությունները, իսկ ստորադասական բարդ նախադասությունների անշարկապ քերականական միջոցները, այսինքն՝ զխափը և երկրորդական նախադասությունների սոսկ գաղափարությամբ, բայական ժամանակների և եղանակների հատուկ կիրառությամբ, բառային կազմի և եղանակափոխության օգտագործմամբ, ինչպես նաև ինտոնացիայով արահայտվող պարսկական հարարերությունների հարցը ամենին չի զբաղեցրել մեր քերականագետներին: Այդ հարցը միայն վերջերս է սկսել արժարժվել հանձնին և Փառնաոյանի¹ և Ռ. Մկրտչյանի²:

УЧЕНИЕ О ПРИДАТОЧНОМ ОБСТОЯТЕЛЬСТВЕННОМ ПРЕДЛОЖЕНИИ В АРМЯНСКОЙ ГРАММАТИЧЕСКОЙ НАУКЕ

Л. Г. ХАЧЕРЯН

(Р е з ю м е)

В настоящей статье исследуется учение о придаточном обстоятельном предложении в армянской грамматической науке с XIII века до наших дней. Автор находит, что грамматическое исследование и разработка вопросов армянского синтаксиса начинается в основном с Вартаана Арсенеци, Клемеса Галаноса, Воскана Арсенеци, Джугасеци, Иоаннесса Нолова, М. Себастиани, Чамчяна и др.

Первыми свое слово о предложении, о его различных типах и их классификации, особенно о характере сложных предложений сказали Галанос и Джугасеци, которые в основном исходили из требований логики, а не грамматики.

Другой период в исследовании синтаксических вопросов начинается Иоаннессом Ноловым, когда делается упор на согласование «частей речи», на их разнообразных отношениях, т. е. на выявлении правил и закономерностей управления и применения, не охватывая предложения.

С Гарагасяна и, в особенности, с Паласяна начинается новый период разработки и анализа синтаксических вопросов, когда в основу синтаксиса вновь ставится предложение, а функции членов предложения определяются исходя из самого предложения. Паласяни и выступавшие после него авторы (Малхасян, Абегиан и др.) развивают дальше учение о сложных предложениях, раскрывают различия двух главных видов

¹ Ռ. Մկրտչյան, Подчинительные связи в сложных предложениях современного армянского языка, автореферат диссертации на соискание ученой степени кандидата филологических наук, Ереван, 1955, էջ 23—25:

² Ռ. Մկրտչյան, Անշարկապ բարդ ստորադասական նախադասության մասին, Հայկական ՍՍՌ ԳԱ Տեղեկագիր, (հատ. գիրք) 1956, № 3:

сложных предложений—сложноподчиненных и сложносочиненных, а также грамматические средства их выражения, производят группировку их отдельных типов. Трудами Паласяна начинается изучение синтаксической категории придаточного обстоятельного предложения.

Характеризуя особенности конструкции синтаксиса обстоятельных и вообще второстепенных предложений, Паласяни, Малхасяни, Туманяни и др. исходили из того, что якобы второстепенные предложения лишь дополняют и «заменяют» тот или другой член главного предложения, кроме сказуемого. В этот вопрос Абегиани внес ясность, совершенно справедливо утверждая, что есть и такие второстепенные предложения, которые дополняют не отдельный член главного предложения, а само главное предложение.

Рассматривая синтаксические взгляды армянских грамматиков о второстепенных обстоятельных предложениях, автор одновременно дает оценку этим взглядам.